



տված սխալները եւ համոզվեցին, որ ունեցել ենք բացթողումներ, վրիպումներ:

Ըստ իս՝ յուրաքանչյուր ոք, ով որոշել է, որ ինքը եղել է, կա ու կլինի հանրապետական, հետադարձ հայացք պիտի ձգի իր անցած ճանապարհին, մեղքի բաժին վերցնի իր ունեցածը: Ես էլ ինչ-որ չափով վերցնում եմ իմ զինակից, իմ գաղափարակից, իմ մտերիմ կուսակցական ընկերների մեղքի բաժինը, վստահ եմ, որ վերաբերվելով անցած ճանապարհը, գնահատական տալով այսօրվա իրավիճակին, մատնանշելով թույլ տված սխալները, կանցնենք ինքնամաքման ճանապարհ: Կարծում եմ՝ առաջիկա ընտրությունից հետո, անկախ արդյունքներից, ՀՀԿ-ն համագումար կիրավորի, հետևություններ կանի: Պարզապես ժամանակը շատ կարճ էր, ըստ իս, համագումարում ամեն ինչը փաստաթղթի տեսք կստանա, եւ համապատասխան քաղաքական գնահատականներ կտրվեն:

– Եվ, ըստ Ձեզ, որոնք են ՀՀԿ-ի թույլ տված ամենաեղանակ սխալներն անցած տարում:

– Գիտե՞ք. ինչ-որ տեղ ՀՀԿ-ն ժողովրդից կտրված էր վերջին շրջանում:

Հանրապետական կուսակցությունն իր իշխանության տարիներին գոնե արտաքին վտանգների չեզոքացման առումով մեծ գործ արեց: Բայց ժողովրդից կտրվածությունը, ավելորդ ինքնավստահությունն իրենց սեւ հետեւանքն ունեցան:

– Հիմա, իհարկե, ընդունված չէ խոսել Հանրապետական կուսակցության ծառայությունների մասին: Հանրությունն էլ, կարծեք, լսել չի ուզում այդ մասին: Այդ բոլորով հանդերձ՝ որո՞նք են ՀՀԿ ծառայության առավել կարելու, անվիճելի, անսակարկելի վկայությունները կամ դրսևորումները:

– Նախ՝ ամենակարևորը՝ մեր ժողովրդի անվտանգության ապահովման խնդիրն էր: Հանդգված եմ, որ այդ ոլորտում հաջողել ենք: Դե ֆակտո Արցախի կարգավիճակի պահպանումն ինքնին հաղթանակ է: Հանրապետության իշխանությունների ուշադրությունն առավելապես կենտրոնացած էր արտաքին քաղաքականության վրա, քան ներքին, ինչի հետեւանքով ներքին քաղաքականության բնագավառում սխալներ թույլ տրվեցին: ՀՀԿ-ն ավելի շատ կենտրոնացած է եղել արտաքին մարտահ-

1
ԵՐԵ ՄՏԱՆՈՎ ԵՍ...
ԸՆՏՐԻՐ
ՂԱՆՐԱՊԵՏԱԿԱՆԻՆ
www.vote1.am

րավերների վրա, եւ կարողացել է ինչ-որ տեղ այդ հավասարակշռությունը պահել: Դա եղել է անդամակցությունը ՀԱԳԿ-ին, ԵԱՏՄ-ին: Որոշակի բարեփոխումներ են տեղի ունեցել մեր կյանքի տարբեր ոլորտներում: Եթե հիշում եք, ԱՊՊԱ համակարգը ներդրվեց Տիգրան Սարգսյանի վարչապետության տարիներին, եւ դժգոհություններ կային: Բայց այսօր այդ համակարգը որոշակի խնդիրներ է լուծում: Եւ, ի վերջո, սոցիալական փաթեթը, որ ներդրվեց պե-

տական ծառայողների համար, կենսաթոշակների որոշակի բարձրացում եղավ: Զոհված ազատամարտիկների ծնողները, եթե թոշակառուներ են, կենսաթոշակից բացի լրացուցիչ ստանում են մոտ 100 հազար դրամ պարգևավճար: Մեր ուշադրության կենտրոնում է եղել ժողովրդագրական խնդիրը. երրորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստը 50 հազարից դարձրեցինք մեկ միլիոն դրամ

– Զուտ մարդկային հա- 4

«Հայոց արժիվների» կայացման ու հզորացման գործում անգնահատելի ներդրում է ունեցել եւ ունի «Սյունյաց արժիվներ» երիտասարդական հասարակական կազմակերպության հիմնադիր, նորանկախ Հայաստանի պետականաշինության մեջ անուրանալի դերակատարություն ունեցող, պատմական Գորիսի հայրենապաշտ գավակ Արայիկ Սաշիկի Պարոնյանը:



Արայիկ Պարոնյանին ճանաչում եմ 1991թ. օգոստոսից: Նա պատվախնդիր սյունեցի է, ով իր գիտակցական կյանքը նվիրել է շարունակում է նվիրել Հայաստանի անկախության ամրապնդմանն ու հզորացմանը, Սյունյաց աշխարհի անպարտելի դրոշակին ծառայելու գաղափարին՝ առաջնորդվելով հայ մեծերի, մասնավորապես Զորավար Գարեգին Նժդեհի ուսմունքով:

Շուրջ 27 տարի ճանաչելով Արայիկ Պարոնյանին՝ հպարտությամբ բարձրաձայնում եմ, որ նա ծնողապաշտ եւ ընտանիքապաշտ, ընկերասեր, պահպանողական եւ հավատարմ լեցուն քրիստոնյա հայ է, որ նա պետական ու քաղաքական գործչի այն տեսակի խտացումն է, ով կարող է արժանապատվորեն կրել հանրապետության օրենսդիր մարմնի անդամի՝ պատասխանատու խաչը:

Երեսուն տարի է՝ ճանաչում եմ Արայիկ Պարոնյանին. դեռեւս Ծարժման տարիներին չէր կարելի չնկատել նրա ակտիվությունը: Տպավորությունս բացառապես դրական է՝ գրագետ, իր գործը լավագույս իմացող, երկրի ու մարզի (հատկապես Գորիսի տարածաշրջանի) խնդիրներին քաջատեղյակ անձնավորությունն է: Նաեւ մարդամոտ ու ընկերասեր է, հայրենակիցների հանդեպ՝ ուշադիր: Ես հաճելիորեն նկատել եմ, որ ինքը, աշխատանքի անցնելով մայրաքաղաքում, երբեք չի

ՍՈՒՐԵՆ ԲԱՂԱՍՏԱՐՅԱԼ

ԵԿՄ Գորիսի տարածքային բաժանմունքի նախագահ

կտրվել իր ծննդավայրից, չի օտարվել մարդկանցից, եղել է մեզանից մեկը: Նկատել եմ նաեւ, որ ուշադիր է Արցախյան ազատամարտում զոհվածների ու վիրավորների ընտանիքների հանդեպ:

Մի խոսքով՝ մեր երկրամասի արժանի գավակն է, ով կարող է նպաստ բերել հայոց խորհրդարանի պրոֆեսիոնալ գործունեությանը:

Իսկ այն հատկանիշները, որոնց մասին մշեցի, կարելու են նաեւ պատգամավորի համար: Չէ՞ որ պատգամավորը պետք է լինի ոչ միայն մեզանից մեկը, այլեւ մեր հոգսերին քաջատեղյակն ու դրանց լուծման համար պատասխանատվություն ստանձնողը: Թեեւ Աժ ընտրությունը համամասնական ընտրակարգով է, բայց կուսակցական պատկանելությունից վեր, խստովանենք, մարդկային ու գործնական հատկանիշներն են, որ այս ընթացքում պիտի հաշվի առնենք: Իսկ այդ տեսակետից նա գնահատանքի արժանի է:

Վստահաբար կարող եմ ասել՝ սխալված չեմք լինի, եթե դեկտեմբերի 9-ին քվեարկենք Արայիկ Պարոնյանի օգտին, ով արդեն իսկ ապացուցել է, որ ի վիճակի է ստանձնել պատասխանատվությունը:



ՎԱՅԱԳԱՆ ԱՂՈՒՅՑ

Գորիսի համայնքի ղեկավար (2014-2017թթ.)

Սոս յոթ տարի աշխատել եմ սոցիալական ոլորտում, որից երկուսը՝ Արայիկ Պարոնյանի գլխավորությամբ: Դա 90-ականների վերջին էր: Հիացած եմ նրա աշխատանքից, գործնական հատկանիշներից, իմացության մակարդակից, աշխատանքի հանդեպ ունեցած նվիրվածությունից, պատասխանատվության զգացումից: Եվ, իհարկե, նրա մարդկային որակներն են դրվատելի: Այդ ամենն են պատճառ եղել, որ տարիներ շարունակ պատասխանատու պաշտոններ է վարել ոչ միայն Սյունիքի

մարզի, այլեւ հանրապետության մասշտաբով: Ասել է թե՛ նրա պաշտոնական առաջխաղացումը միշտ էլ պահանջված է եղել: Ու միշտ էլ լավագույնս է կատարել իր պարտականությունները՝ դրսևորելով պրոֆեսիոնալ բարձր որակներ, լինելով ընդօրինակման արժանի գործընկերների համար:

Եվ ես ուրախ եմ, որ Արայիկ Պարոնյանը ձգտում է ընդգրկվել հանրապետության օրենսդիր մարմնում: Վստահ եմ՝ պատգամավոր ընտրվելով, նա կարողարացնի Սյունիքի ու Վայոց ձորի ընտրողների հույսերը: Սրտանց հաջողություն եմ մտղում Արայիկ Պարոնյանին եւ ակնկալում, որ շատ-շատ սյունեցիներ իրենց վստահության քվեն անպայման կտան Ազգային ժողովի պատգամավորի արժանավոր թեկնածու Արայիկ Պարոնյանին:

